

Մ Ա Ս Ի - Բ

Հ ա ր կ ա ք յ ո չ ե տ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո թ յ ա ն հ ի մ ն ա կ ա ն ո լ ղ ղ ո թ յ ո ն ն ե ր ը

Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

Համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ 2008 թվականի 4-րդ եռամսյակից Հայաստանում արձանագրված տնտեսական անկման տեմպերն արդեն անցյալ օգոստոս ամսից դանդաղեցին և 2010 թվականի հունվարին ՀՆԱ իրական աճը կազմեց նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 102.4%-ը: Ներկայումս կարելի է արձանագրել, որ Հայաստանը հաղթահարել է ճգնաժամը և ՀՀ կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները, մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականության բնագավառում, ուղղված են լինելու տնտեսության զարգացման կայուն տեմպերի ապահովմանը, ինչը թույլ կտա հնարավոր սեղմ ժամկետներում վերադառնալ նախաճգնաժամային տնտեսական բարձր աճին:

ՀՀ 2011-2013թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներով: ՄԺԾԾ-ի համաձայն ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2011-2013թթ կտատանվի 23.4%-23.3% սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 22.2%-23.2% սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2011-2013թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել 28.3%-27.3% սահմաններում:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են 2009-2011թթ հարկաբյուջետային քաղաքականությունն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 1 2009-2011թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2009թ փաստացի ¹	2010թ ծրագիր ²	2011թ նախագիծ
Ա. Արտահայտված մլրդ դրամով			
1. Ընդամենը եկամուտներ	672.3	742.1	850.0
այդ թվում՝			
- ներքին եկամուտներ	651.0	699.6	795.0
որից՝			
հարկեր, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	623.1	675.2	773.4
2. Ընդամենը ծախսեր	913.0	935.5	998.4
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	702.0	771.5	835.2
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	211.0	164.0	163.3
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	240.7	193.4	148.6
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	21.7%	23.1%	22.6%
որից՝			
- ներքին եկամուտներ	21.0%	21.8%	21.1%
որից՝			
հարկեր, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	20.1%	21.0%	20.6%
2. Ընդամենը ծախսեր	29.4	29.1	26.5
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	22.6	24.0	22.2
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	6.8	5.1	4.3
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	7.7	6.0	3.9
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,102.8	3,214.6	3,763.5

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 22.6%-ի չափով կանխատեսված ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 3.9%-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2011 թվականին ապահովել ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի 26.5%-ի կամ 998.6 մլրդ դրամի չափով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշները ընդհանուր առմամբ համահունչ են ՄԺԾՕ-ով հաստատված միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների ընդհանուր գումարը ՄԺԾՕ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 16.2 մլրդ դրամ:

¹ 2009-2011թթ համադրելիությունն ապահովելու նպատակով 2009 թվականի փաստացի ցուցանիշներում ներառված չեն ՀՀ 2009թ պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառնության եղանակով ստացված եկամուտները և կատարված ծախսերը, ինչպես նաև 2010, 2011թթ չնախատեսված արտաբյուջետային հաշիվների 2009 թվականի փաստացի եկամուտներն ու ծախսերը:

² «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները և դրանց հաշվարկման հիմքում դրված ՀՆԱ-ի մեծությունը:

մով կամ 1.9 %-ով, իսկ ծախսերը նվազել են 10.1 մլրդ դրամով կամ 1.0 %-ով: Վերը նշված փոփոխությունները բնականաբար ազդեցություն ունեցան նաև 2011 թվականի բյուջետային դեֆիցիտի մեծության վրա (վերջինիս գումարը ՄԺԾՕ-ով նախատեսվածի դիմաց նվազել է 26.3 մլրդ դրամով): Վերը նշված տարբերությունները պայմանավորված են բյուջետային մուտքերի կառուցվածքային փոփոխությամբ, հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով, ինչպես նաև նպատակային վարկային ծրագրերի ծավալների ճշգրտմամբ:

Նախագծով նախատեսված և ՄԺԾՕ հաշվարկների հիմքում դրված բյուջետային եկամուտները հիմնականում տարբերվում են պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված եկամուտներով՝ պայմանավորված ինչպես դրամաշնորհների կազմի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾՕ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 541.35 դրամ և 401.15 դրամ, Նախագծում՝ 464.39 դրամ և 363.74 դրամ):